ՀԱՎԵԼՎԱԾ N 18

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2025 թվականի մարտի - ի N հրամանի

ՀԱՅ_ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ 011401.00.6 «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 011401.09.6 «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ և ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ» ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Բակալավրիատում ուսման տևողությունը չորս տարի է: Շրջանավարտը ստանում է մանկավարժության բակալավրի որակավորում:

Դիմորդները մասնագիտական քննություն են հանձնում հետևյալ առարկաներից.

1-ին քննություն՝ «Ընդհանուր ֆիզիկական պատրաստվածություն» (ԸՖՊ)

Ընդունելության քննության հիմնական նպատակը՝ մրցութային կարգով ի հայտ բերել դիմորդների շարժողական ընդունակությունների մակարդակը և ըստ նորմերի, գնահատման միավորների, արձանագրել յուրաքանչյուր դիմորդի վաստակած գնահատականը:

Վարժություններ		ՄԻԱՎՈՐՆԵՐ												
		20	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8
Վազք 60մ/ վրկ.	Տղամարդիկ	7,3	7,4	7,5	7,6	7,7	7,8	7,9	8,0	8,2	8,4	8,6	8,8	9,0
	Կանայք	9,0	9,1	9,2	9,3	9,4	9,5	9,6	9,8	10,0	10,2	10,4	10,6	10,8
Տեղից հեռացատկ	Տղամարդիկ	295	290	285	280	275	270	265	260	250	240	230	220	210
	Կանայք	240	235	230	225	220	215	210	205	200	195	190	180	170
Զգումներ պտտաձողից տղամարդիկ (քանակ)		18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6
Զգումներ պտտաձողից 190 սմ (+) հասակ կամ 90 կգ (+) քաշ ունեցողների համար (քանակ)		14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2
Հենում պառկած դրությունից սեղմումներ, կանայք (քանակ)		20	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7

Ծանոթություն:

- *1. Տեղից հեռացատկ վարժության համար տրվում է երկու փորձ, գրանցվում է լավագույն արդյունքը:*
- *2. Վերջնական գնահատականը որոշվում է հավաքած միավորների միջին թվաբանականով:*

2-րդ քննություն՝ «Մարդու կազմաբանություն և ֆիզիոլոգիա» (ՄԿՖ) (գրավոր)

Դիմորդները գրավոր քննություն են հանձնում «Մարդու կազմաբանություն և ֆիզիոլոգիա» առարկայից, ընդունելության քննության առարկայական ծրագրի և չափորոշիչներին և քննական թեստի օրինակին համապատասխան:

«Մարդու կազմաբանություն և ֆիզիոլոգիա» առարկայի ընդունելության քննության արդյունքները համարվում են ոչ բավարար, եթե դիմորդը թեստային հարցերի առաջադրված պահանջներից հավաքում է 1-7 միավոր, 8-20 միավոր ստանալու պարագայում դիմորդը համարվում է քննական փուլը հաղթահարած և կարող է մասնակցել հետագա մրցույթին:

Քննական թեստի 1-20 առաջադրանքներից յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Մասնագիտական գրականության ցանկ

- Ամիրյան Ս., Գևորգյան Է. «Կենսաբանություն», Ասողիկ Գրատուն
- Սիսակյան Ս., Թանգամյան Տ., Միրզոյան Գ. «Կենսաբանություն» 8-րդ դասարան, Երևան Տ. Մեծ հրատարակչություն 2014
- Տ.Ս. Գրիգորյան «Մարդու նորմալ անատոմիայի ատլաս, Զանգակ հրատարակչություն
- Կենսաբանության թեստային առաջադրանքների շտեմարան, Մաս 1, Երևան Աստղիկ գրատուն 2017թ.
- Կենսաբանության թեստային առաջադրանքների շտեմարան, Մաս 2, Երևան Աստղիկ գրատուն 2017թ.
- Կենսաբանության թեստային առաջադրանքների շտեմարան, Մաս 3, Երևան Աստղիկ գրատուն 2018թ.
- Կենսաբանության թեստային առաջադրանքների շտեմարան, Մաս 4, Երևան Աստղիկ գրատուն 2018թ.